https://doi.org/10.46991/hc.2025.si1.271

Gorbachev's Perestroika and the National Question

Artak Khachatryan
https://orcid.org/0009-0005-5607-5903
YSU Laboratory of Ethnographic and Anthropological Research, Junior Researcher, Ph.D
artak592@gmail.com

Keywords - USSR, national question, Perestroika policy, M. Gorbachev, Nagorno-Karabakh conflict, L. Brezhnev, interethnic clashes, Fergana, Osh.

The Soviet Union was a unique state formation where national policy was marked by contradictions: on one hand, it promoted national identity, while on the other, it aimed at assimilation. Soviet ideology treated the national question as secondary, assuming that socialism would erase ethnic distinctions. However, during the Perestroika period, national tensions escalated, contributing to the destabilization of the state. Local conflicts, such as the Fergana and Osh riots, the Georgian-Abkhaz and Nagorno-Karabakh conflicts, and protest movements in the Baltic states and Crimea, highlighted deep-rooted contradictions.

The Soviet Union's ineffective national policy and Gorbachev's failure to provide a conceptual solution accelerated the USSR's collapse, making the national question one of the key factors in its downfall.

Գորբաչովյան վերակառուցումը և ազգային հարցը

Արտակ Խաչատրյան
ԵՊՀ Ազգագրական և մարդաբանական հետազոտություններ լաբորատորիա,
կրտսեր գիտաշխատող, պ.գ.թ.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 271-279.

Received: 10.11.2024
Revised: 05.02.2025
Accepted: 20.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Հիմնաբառեր - ԽՍՀՄ, ազգային հարց, վերակառուցման քաղաքականություն, Մ. Գորբաչով, ղարաբաղյան հակամարտություն, Լ. Բրեժնև, ազգամիջյան բախումներ, Ֆերգանա, Օշ:

Կազմավորման առաջին տարիներին ազգային հարցը Խորհրդային Միությունում քաղաքական առաջնահերթությունների թվին չէր պատկանում: Ճիշտ է, ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների շրջանում խորհրդային քաղաքականությունը նպաստեց ազգային ինքնության զարգացմանը, այդուհանդերձ, բրեժնևյան կառավարման տարիներին խոսվում էր նոր տիպի պատմական հանրույթի՝ «խորհրդային ժողովրդի» կայացման մասին: Սակայն վերակառուցման տարիներին ազգային խնդիրները սրվել են՝ դառնալով պետական անկայունության հիմնական գործոններից մեկը: Ֆերգանայի և Օշի բախումները, վրաց-աբխազական ու ղարաբաղյան հակամարտությունները, ինչպես նաև Բալթյան երկրներում և Ղրիմում տեղի ունեցած ազգային-ազատագրական շարժումները վկայում էին խորհրդային տարիներին կուտակված հիմնախնդիրների մասին:

Խորհրդային Միության ազգային քաղաքականության անարդյունավետությունը և Գորբաչովի՝ այս հարցում հստակ հայեցակարգ չունենալը նպաստեցին կայսրության փլուզման արագացմանը՝ ազգային հարցը դարձնելով ԽՍՀՄ-ի կործանման առանցքային գործոններից մեկը:

Горбачевская перестройка и национальный вопрос

Артак Хачатрян
ЕГУ лаборатория этнографических и антропологических исследований, младший научный сотрудник, к.и.н.

Ключевые слова - СССР, национальный вопрос, политика перестройки, М. Горбачёв, нагорно-карабахский конфликт, Л. Брежнев, межнациональные столкновения, Фергана, Ош.

Советский Союз представлял собой уникальное государственное образование, в котором национальная политика имела двойственный характер: с одной стороны, поддержка национального развития, с другой — стремление к ассимиляции. В советской

идеологии национальный вопрос считался второстепенным, так как предполагалось, что социализм приведёт к стиранию этнических различий. Однако уже в годы перестройки национальные проблемы обострились, что стало одним из факторов дестабилизации государства. Локальные конфликты, такие как Ферганские и Ошские события, грузино-абхазский и нагорно-карабахский конфликты, а также протестные движения в Прибалтике и Крыму, стали проявлением долгосрочных противоречий. Неэффективная национальная политика Советского Союза и неспособность Горбачёва предложить концептуальные решения ускорили процесс распада СССР, сделав национальный вопрос одним из ключевых факторов его краха.

* * *

Մուտք: Խորհրդային Միությունը XX դարում գոյություն ունեցած առանձնահատուկ պետություն էր՝ իր ուրույն կառուցվածքով և պատմությամբ: Այն կրոնական, լեզվական, սոցիալ-քաղաքական տարբեր բովանդակություն կրող ազգությունների ներառող պետական կազմավորում էր: Այն անօրինակ էքսպերիմենտ էր անցած դարաշրջանում, որը ֆեդերատիվ սկզբունքով իր կազմում պարփակելով բազմաթիվ ազգությունների՝ նպատակադրվել էր ստեղծել նոր տիպի պատմական էթնիկ հանրույթ՝ խորհրդային ժողովուրդ: Հարկ է նկատել, որ ֆեդերատիվ սկզբունքով այդ պետությունը սիստուատիվ կերպով էր անդրադառնում ազգային հարցին: Ե՛վ նախահեղափոխական ժամանակահատվածում, և՛ հեղափոխությունից հետո բոլշևիկներն առանձին լուրջ, հստակ և կառուցիկ ծրագիր չունեին ազգային հարցի մասին: Դրան նպաստում էր բոլշևիկյան գաղափարախոսությունը ևս, ըստ որի՝ սոցիալիզմի հաղթանակի դեպքում համահարթվելու են ազգային հատկանիշները, միաձուլվելու են բոլոր ազգերը, ուստի, առանձին անդրադարձի և հատուկ պլանավորված ազգային քաղաքականության կարիք չկա: Ժամանակը ցույց տվեց, որ բոլշևիկյան գաղափարախոսության այս և մյուս դրույթներն իրականություն չդարձան: Ընդհակառակը, ազգային հարցին պատշաճ անդրադարձի բացակայությունը հանգեցրեց արդեն վերակառուցման տարիներին կոնֆլիկտների ի հայտ գալուն: ԽՍՀՄ փլուզումից հետո նրա նախկին տարածքի վրա կազմավորված անկախ հանրապետությունները ժառանգեցին խնդիրների համախումբը, այդ թվում ազգային հարցի դիտանկյունից, որոնք դրսևորվել էին գորբաչովյան վերակառուցման ժամանակաշրջանում: Այդ խնդիրներն, ոչ հազվադեպ, իրենց ձևով ու բովանդակությամբ խորհրդային իրականության ծնունդ էին: Եվ այս տեսանկյունից է կարևոր նաև ազգային հարցի քննախոսությունը:

Հակասությունները ազգային քաղաքականությունում: Խորհրդային ազգային քաղաքականության մեջ առկա էր արմատական հակասություն. ձգտում՝ էթնիկական տարածքների ազգայնացումը, և ձգտում՝ ասիմիլացիայի ենթարկել տարբեր ազգություններին խորհրդային ժողովրդի շրջանակներում: Միացումը և անջատումը

գիտակցված էին, թեև հակասող էին նպատակներին, որ կանգնած էին խորհրդային պետության քաղաքականության առջև: Ռ. Սյունիի խոսքերով. «Պետությունը, որն իր առջև նպատակ էր դրել հաղթահարել ազգայնականությունը և ազգերի միջև տարբերությունները, ըստ էության, ստեղծեց ինստիտուտներ և նախաձեռնեց գործընթացներ, որոնք արագացրին գիտակցական, աշխարհիկ, քաղաքականապես մոբիլիզացված ազգերի զարգացումը» [Суни, 2007, 36–82]: Հենց սկզբից անհետևողականությունը տարվող քաղաքականությանը, որն աջակցում էր ազգային զարգացմանը՝ մի կողմից, իրացվող պահանջները կենտրոնացված, գաղափարապես և մշակութապես միատարր պետության՝ մյուս կողմից, հանգեցրեց լարվածության, որն էլ բերեց անկայունություն, ինչը նախորդեց խորհրդային համակարգի անկմանը: Ընդհանրապես, անհամաչափ քաղաքականությունը տարբեր ոլորտներում խորհրդային իրականության հատկանշական գծերից է: Օրինակ՝ «ժողովուրդների բարեկամության» գաղափարի համաձայն խորհուրդների երկրի տարածքում բնակվող բոլոր մեծ ու փոքր էթնիկ հանրությունները իրավահավասար են, սակայն, քարոզչությունը բավական հստակ կերպով այդ գաղափարը ենթարկում էր ռուսակենտրոն էտատիզմի ներքին տրամաբանությանը, և հստակեցնում, որ «ռուսները առաջինն են հավասարների մեջ» [Бранденбергер, 2009, 57], իսկ երեսնական թվականների վերջին ռուսերենի պարտադիր ուսուցումը բոլոր միութենական հանրապետություններում՝ որպես երկրորդ լեզու պարտադրող օրենքը, դրա օրենսդրական ամրակայումն էր:

Ուշագրավ է ԽՍՀՄ-ում ազգայինի, ազգային հարաբերությունների վերաբերյալ դիսկուրսը: Հասարակագիտությունը, սոցիալ-հումանիտար գիտությունները խորհրդային ժամանակաշրջանում ուղղված էին հակաքարոզչության և գաղափարաբանական պայքարի ընդդեմ արևմտյան հասարակագիտության: 1940-60-ական թթ. ազգային խնդիրների ուսումնասիրությունը տարվում է հիմնականում քաղաքացիական պատմության շրջանակներում: Այս ժամանակահատվածում քաղաքական-հասարակական մակարդակներում շարունակ շրջանառվում էր այն տեսակետը, որ ազգային հարցը ԽՍՀՄ-ում հաջողությամբ լուծված է [Дзидзоев, 2000, 28]: Քիչ ուշադրություն էր սևեռվում ազգերի և ազգային հարաբերությունների խնդիրներին: Այս ժամանակահատվածի խորհրդային հասարակագիտության հատկանշական գծերից է դասակարգայինի գերազանցության և ազգայինի երկրորդայնության, ստորակայության մատնանշումը: Ասվածի ցցուն վկայությունն է այն, որ Լ. Բրեժնևի կառավարման տարիներին, օրինակ, Խորհրդային Միությունում կային մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրությամբ զբաղվող մի քանի համալսարաններ, գիտական հաստատություններ, իսկ ազգային հարցերով զբաղվող և գիտական ուսումնասիրությամբ ու մշակմամբ զբաղվող որևէ հաստատություն չկար, չնայած մեկ անգամ չէ, որ Բրեժնևին

առաջարկվել է ստեղծել ազգային հարցերով զբաղվող նման մի կենտրոն [Шевякин, 2005, 12]: Դա տեղի չունեցավ՝ դասակարգայինը ազգայինից վեր դասելու առերևույթ տրամաբանությամբ:

Տոտալ վերահսկողության ներքո էր նաև մշակույթը, այն ինքնակա նշանակությունից զրկված էր, և ամբողջապես կազմում էր ԽՄԿԿ գաղափարաբանական գործունեության բաղկացուցիչներից [Белошапка, 2012, 17]: Իսկ եթե կուսակցությունն էր կանխորոշում մշակույթի այս կամ այն ոլորտի զարգացման ուղենիշերը, ապա բնական է, տուժելու էր ստեղծարարությունը:

1960-ական թթ. խորհրդային հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկություններից ելնելով՝ ԽՄԿԿ ղեկավարությունը 22-րդ համագումարում (1961 թ. հոկտեմբերի 17-31, Մոսկվա) եզրակացրեց, որ «ԽՍՀՄ-ում ձևավորվել է տարբեր ազգերի մարդկանց նոր պատմական հանրույթ՝ խորհրդային ժողովուրդը, որի անդամներն ունեն ընդհանուր բնութագրական գծեր, բազմաթիվ ընդհանուր գծեր հոգևոր նկարագրում և հոգեբանությունում» [Дзидзоев, 2000, 38]: «Մարդկանց նոր պատմական հանրույթի մասին» ստեղծված դոգման ակտիվորեն քարոզվում էր կենտրոնական և հանրապետական զանգվածային լրատվամիջոցների կողմից: Եվ արդեն խորհրդային ազգի՝ որպես մարդկանց ձևավորված նոր պատմական հանրույթի մասին, խոսվում է ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրությունում [Конституция Основной Закон) Союза Советских Социалистических Республик, 1985, 6]: Այդ մտայնությունն արտացոլանք էր գտնում նաև գիտական շրջանակներում, և որպես նոր պատմական հանրույթի ձևավորման հիմք էր համարվում մարքս-լենինյան գաղափարաբանության ընդհանրությամբ խորհրդային քաղաքացիների համար [Гиндин, 1972, 52], սակայն, էթնիկ գործընթացներում և էթնոգենեզում քաղաքական գաղափարախոսությունները ոչ առաջնային դեր են կատարում, առավել ևս այն դեպքում, երբ խոսքը գնում է մեկ քաղաքական կազմավորման շրջանակներում էթնոգենեզի փուլը վաղուց անցած և կայուն էթնոազգային ինքնագիտակցության տիրապետող էթնոքաղաքական հանրույթների մասին:

«Խորհրդային ազգը» գաղափարաբանորեն թմբկահարվող կեղծ կատեգորիա էր, բայց կոմունիստները դրան վերագրում էին «քաղաքական» ազգի հատկանիշներ: Փորձ էր արվում, միևնույն ժամանակ, զերծ մնալ ազգայնական դրսևորումներից: Այս առումով համերաշխում ենք Ռ. Բրուբեյքերի դիտարկմանը, ըստ որի՝ խորհրդային քաղաքականությունը հակաազգայնական լինելով՝ հակաազգային չէր, ապացույցը՝ ազգային ամենայնի ինստիտուցիոնալականացումը [Брубейкер, 2010, 82]: Խորհրդային ղեկավարությունը դա ևս կատարում էր՝ ելնելով իր հեռուն գնացող նպատակներին ծառայեցնելու համար, և այդ բանի լավագույն վկայությունն են խորհրդային պետության գոյության վերջին տարիներին ի հայտ եկած ազգային խնդիրները, որոնք ի դերև հանեցին ազգայինի ինստիտուցիոնալականացման ընթացքում առկա բացերը:

1985 թ. գարնանը ԽՄԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար դարձած Մ. Գորբաչովը հասկանում էր խորհրդային համակարգի առաջ ծառացած լուրջ մարտահրավերները: Կենսապայմանների, կյանքի տարբեր ոլորտներում Արևմուտքի հետ մրցակցությունն անհեռանկարային էր: Նման համեմատությունն ակնհայտ էր դարձնում ԽՍՀՄ հետ մնալը: Սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերը բրեժնևյան կայունության պայմաններում զերծ էին մնացել որևէ վերափոխությունից՝ ծնելով այնպիսի երևույթ, որը բնութագրվում է որպես «լճացում»: Բնականաբար, լճացումից դուրս գալու միջոց և նախապայման էր ռեֆորմների անցկացումը: Երկրի կյանքի վերափոխությունը պահանջում էր արդիականացում: Այդ արդիականացման ներքո գլխավորապես հասկացվում էր գիտատեխնիկական վերափոխությունը, հարաբերությունների որոշակի չափով վերանայումն արտաքին աշխարհի հետ [Горбачев, 1987]: Ազգային հարցի, ազգային քաղաքականության վերաբերյալ խորքային, հայեցակարգային մոտեցում չցուցաբերվեց: Այդուհանդերձ, կոշտ տոտալիտարիզմի և ռեպրեսիվ ապարատի միջոցով իր ամբողջականությունը պահպանող պետությունը չէր կարող երկար ժամանակ խուսափել ազգային հարցին առերեսվելուց: Ազգային հարցում անհետևողականությունը, ազգային քաղաքականության տարբեր մակարդակների հարցերը այսրոպեական տրամաբանությամբ լուծելը դառնալու էին դանդաղ գործողության ռումբ խորհրդային ներքին կյանքի համար: 1920-30-ականներին կորենիզացիայի քաղաքականության արդյունքում միութենական հանրապետություններում կտրուկ ավելացել էր գրագիտության մակարդակը, տեղերում խորհրդային կարգերը ընկալելի և յուրային դարձնելու նպատակով նույն նպատակով վարչական օղակներում առաջ էին քաշվել ազգային կադրեր: Այս իրողությունները որոշակի դեր խաղացին 1980-ականների կեսերից վերակառուցման քաղաքականության ընթացքում ազգային հարցերի բարձրացման համատեքստում: Հրապարակախոսական, հասարակական-քաղաքական, ոչ հազվադեպ՝ նաև գիտական միջավայրերում, հանդիպում է այն մտայնությունը, որ վերակառուցման քաղաքականության մեկնարկը նոր հույսեր արթնացրեց հսկայածավալ Խորհրդային երկրի տարբեր մասերում ազգային հարցերի բարձրացման և դրանց արդարացի լուծման առումով: Հարկ ենք համարում նշել, որ, մեր կարծիքով, հենց ազգային հարցում վերակառուցման քաղաքականության դատարկաձեռնությունը հիմք հանդիսացան ազգայնական տրամադրությունների ծավալման համար:

Ազգամիջյան հակամարտությունների առանձնահատկությունները: Պետք է նշել, որ վերակառուցման շրջանում ծավալված ազգամիջյան հակամարտությունները միշտ չէ, որ էթնիկ գենեզիս ունեին: Արդեն վերը նշված կորենիզացիայի հետևանքով կազմավորված միութենական հանրապետությունների ազգային վերնախավերը հետզհետե մեծ ազդեցություն էին կուտակել: Արդեն 1970-ական թվականներից զգալի հեղինակություն

հավաքած միութենական հանրապետությունների ղեկավարների կենտրոնախույս տրամադրությունները ստեղծում էին յուրահատուկ մրցակցային միջավայր ազգությունների միջև: Այդ մրցակցությունը ազգայնականության վերածվելու և կոնֆլիկտային միջադեպերի և բախումների վերածվեցին Ուզբեկստանում՝ Ֆերգանայում, որը 1989 թ. վերաճեց արյունալի բախումների, 1989 թ. հունիսին Ղազախստանում՝ Նոր Ուզենում հյուսիսկովկասյան ներգաղթյալների և ղազախների միջև, 1990թ. ղրղզա-ուզբեկական բախումները Ղրզրզական Օշ քաղաքում [Чешко Сергей, Роль этнонационализма в распаде СССР]: Այս բախումների հիմքում, ըստ էության, դրված չէր ազգայնական գաղափարներ: Սոցիալական, տնտեսական չլուծված խնդիրներն էին, որ վերաճեցին ազգամիջյան բախումների: Վերակառուցման շրջանի առաջին կոնֆլիկտներից մեկը կապված էր Ղազախստանում կուսակցական առաջին դեմքի փոփոխության հետ: Ղազախստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում ղազախ Դ. Կունաևի փոխարեն ռուս Գ. Կոլբինի նշանակումից հետո ծայր առավ երիտասարդության դժգոհությունները:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ վերակառուցման ժամանակաշրջանում առկա հակամարտությունների մի զգալի մասը «սառեցված» կոնֆլիկտներն էին, որոնք կապված էին խորհրդային, նույնիսկ՝ նախախորհրդային անցյալի հետ: Խորհրդային ռեժիմի թեկուզ չնչին լիբերալականացման դեպքում այդ կոնֆլիկտները վերաակտիվացան նոր ուժգնությամբ՝ ցույց դնելով խորհրդային տասնամյակների ընթացքում կրկնվող գաղափարական այն կարգախոսների սնանկությունը, որ ԽՍՀՄ-ում ազգային հարցը լուծված է, ավելին, ձևավորվել է էթնիկ հանրության նոր պատմական տիպ՝ խորհրդային ժողովուրդը:

Այդպիսի կոնֆլիկտների թվին էին պատկանում ղրիմյան թաթարների Ղրիմ վերադառնարձի շարժումը 1987 թ., մերձբալթյան հանրապետությունների բողոքի շարժումները՝ անկախության կորստի կապակցությամբ Ռիբենտրոպ-Մոլոտով պակտի արդյունքում, ինգուշա-օսական կոնֆլիկտը՝ կապված 1944 թ. Ինգուշների դեպորտացիայի և այնուհետ վերադարձի հետ: Խորհրդային ժամանակաշրջանի վարչաքաղաքական վերափոխումների հետ էին կապված նաև վրաց-աբխազական հակամարտությունը, որը վերաճեց արյունալի պատերազմի, ինչպես նաև վրաց-հարավօսական կոնֆլիկտը:

Այս շարքում առանձնահատուկ է ղարաբաղյան հակամարտությունը: Պետք է նշել, որ այն իր արմատներով գնում է դեպի նախախորհրդային անցյալ, իսկ 1918-1920 թթ. անկախ հանրապետությունների և Խորհրդային Միության պայմաններում հակամարտությունը ստացավ ինստիտուցիոնալ բնույթ: Խորհրդային շրջանում քաղաքական և գաղափարական կոշտ կապանքների պայմաններում այդ հակամարտությունը լուծում չստացավ, այլ սառեցվեց՝ դառնալով դանդաղ գործողությամբ ռումբ: Ավելին, խորհրդային ազգային քաղաքականությունն իր հերթին պայմանավորեց

այդ հակամարտության տրանսֆորմացիաները, իսկ վերակառուցման քաղաքականության պայմաններում այդ դրսևորվեց նոր թափով: Եվ Միութենական կենտրոնը, չունենալով ազգային հարցերում ընդհանրապես, և ղարաբաղյան հակամարտության հարցում, մասնավորապես, մշակված հայեցակարգ, դիրքավորվեց ազգային հարցը մերժողի, անտեսողի դերում՝ շարժումների մասնակիցներին պիտակավորելով «ծայրահեղականներ»:

Վերջաբան: Ընդհանրապես, հսկայածավալ կայսրության անկման մասին խոսելիս՝ թե՛ հասարակական-քաղաքական շրջանակները, թե՛ շարքային քաղաքացիները, թե՛ գիտական որոշ շրջանակներ դրա մեջ մեղադրում են Գորբաչովին ու Ելցինին, այլ դեպքում՝ շեշտը դնում տնտեսական գործոնի վրա: Միության նախկին վարչապետ Նիկոլայ Ռիժկովն էլ ԽՍՀՄ փլուզման հարցում կարևոր դերակատարություն է վերապահում ազգային հարցին և ազգայնականությանը [Рыжков, 2009, 37]: Կարծում ենք, որ նման հզոր պետության փլուզման հարցում գերապատվություն տալ այս կամ այն գործոնին, առավել ևս՝ անձին կամ անձերին, ճիշտ չէ: Դժվար պատկերացնելի է, որ մեկ կամ երկու անձ կարող էին փլուզել երկբևեռ աշխարհի բևեռներից մեկն առաջնորդող ատոմային գերտերությունը: Ազգային հարցի մերժումը խորհրդային իրականության տասնամյակների ընթացքում, վերակառուցման քաղաքականության մեկնարկում այդ հարցի անտեսումը բերեց նրան, որ տասնամյակներով կուտակված խնդիրները ազգային քաղաքականության բնագավառում ռեժիմի թուլացման պայմաններում ի հայտ էին գալու նոր ուժով և նոր դրսևորումներով: Իրականում, Խորհրդային Միության թուլացման և փլուզման պրոցեսը մեկնարկել էր ավելի վաղ, և ազգային հարցի սրումը հանդիսանում էր դրան նպաստող բազմաթիվ գործոնների շարքում կարևորներից մեկը:

Գրականության ցանկ

Beloshapka 2012 - Beloshapka N., Gosudarstvo i kul'tura v SSSR: ot Khrushcheva do Gorbacheva: monografiya, Izhevsk, 2012, 320 s. **(in Russian)**

Brandenberger 2009 - Brandenberger D., Natsional-bol'shevizm. Stalinskaya massovaya kul'tura i formirovaniye russkogo natsional'nogo samosoznaniya (1931-1956 gg.), SPb., 2009, 416 s. **(in Russian)**

Brubeyker 2010 - Brubeyker R., Mify i zabluzhdeniya v izuchenii natsionalizma, Mify i zabluzhdeniya v izuchenii imperii i natsionalizma, red-y I. Gerasimov, M. Mogil'ner, Al. Semenov, M., 2010, s. 62-109. **(in Russian)**

Gindin 1972 - Gindin A., Sovetskiy narod-novaya istoricheskaya obshchnost' lyudey, Fakty i domysly protiv fal'sifikatsii natsional'nykh otnosheniy v Sovetskom Soyuze, red.-y Mitin M., Vartichan I. i dr., Kishinev, 1972, s. 52-60. **(in Russian)**

Gorbachev 1987 - Gorbachev M., Perestroyka i novoye myshleniye dlya nashey strany i dlya vsego mira, M., 1987, 271 s. **(in Russian)**

Dzidzoyev 2000 - Dzidzoyev V., Natsional'nyye otnosheniya na Kavkaze, Vladikavkaz, 2000, 239 s. **(in Russian)**

Konstitutsiya 1985 - Konstitutsiya (Osnovnoy Zakon) Soyuza Sovetskikh Sotsialisticheskikh Respublik; Prinyata na vneocherednoy sed'moy sessii Verkhovnogo Soveta SSSR devyatogo sozyva 7 oktyabrya 1977 goda. KONSTITUTSIYA (Osnovnyye Zakony) Soyuznykh Sovetskikh Sotsialisticheskikh Respublik , M., 1985, 744 s. **(in Russian)**

Ryzhkov 2009 - Ryzhkov N., Glavnyy svidetel', M., 2009, 240 s. Suni 2007 - Suni R.G., Imperiya kak ona yest': imperskiy podkhod v istorii Rossii, «natsional'naya» identichnost' i teorii imperii, Natsionalizm v mirovoy istorii, M., 2007, s. 36–82. **(in Russian)**

Cheshko - Cheshko S., Rol' etnonatsionalizma v raspade SSSR, Skepsis, Nauchno-prosvetitel'skiy zhurnal, https://scepsis.net/library/id_1763.html **(in Russian)**

Shevyakin 2005 - Shevyakin A., Razgrom sovetskoy derzhavy. Ot «ottepeli» do «perestroyki», M., 2005, 252 s. **(in Russian)**